ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԺ Աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար
Դավիթ Առաքելյանին

Հարգելի պարոն Առաքելյան,

Տեղեկացնում ենք, որ առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստան» խմբակցությունը նախաձեռնելու է գործընթաց՝ պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու վերաբերյալ՝ ԱԺ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագիծը քննարկելու նպատակով:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական Օրենքի 162-րդ հոդվածի 6-րդ մասով՝ անհրաժեշտ է սահմանված ժամկետում «Հայաստան» խմբակցությանը ներկայացնել պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը:

Տեղեկացնում ենք նաև, որ նման խնդրանքով «Հայաստան» խմբակցությանն են դիմել 100-ից ավելի լրագրողներ(դիմումը կցվում է):

Առդիր՝ 8 էջ:

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Ս.Օհանյան

27.03.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԺ նախագահ Ա. Սիմոնյանին

Պարոն Սիմոնյան,

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ և 16-րդ հոդվածներով ներկայացնում ենք Ազգային ժողովի «Հայաստան» և «Պատիվ ունեմ» ընդդիմադիր խմբակցությունների համատեղ որոշումը՝պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին:

Առաջարկում ենք այն ընդգրկել ԱԺ 2025 թվականի ապրիլի 15-ին գումարվող հերթական նիստերի օրակարգում:

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Ս.Օհանյան

«Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար՝ Տ.Աբրահամյան

09.04.2025թ.